ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 1673 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 722-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ ու 34-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ ու 56-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սիսիանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 722-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման նախաբանից հանել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 47-րդ ու 84-րդ» բառերը.

2) որոշման 2-րդ կետում՝

ա. «1515.61» թիվը փոխարինել «1515.89» թվով,

բ. «9.14» թիվը փոխարինել «9.42» թվով.

3) որոշման 3-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «1515.61» թիվը փոխարինել «1515.89» թվով, իսկ «141.08» թիվը՝ «141.36» թվով,

բ. «բ» ենթակետում «739.35» թիվը փոխարինել «739.07» թվով.

4) որոշման N 4 հավելվածում՝

ա. «Հատուկ պահպանվող տարածքների» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«		Հատուկ պահպանվող տարածքների	9.42	7.17	76.21	»,

բ. «Ընդամենը» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	Ընդամենը	1515.89	141.36	739.07	».

5) որոշման N 6 հավելվածում՝

ա. 217-021-րդ պարբերությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«	217-003				0.28					պանթեոն	չմ»,

բ. «ընդամենը» պարբերությունում «9.14» թիվը փոխարինել «9.42» թվով.

6) որոշման N 7 հավելվածում՝

ա. 217-003-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

բ. «Ընդամենը» պարբերությունում «76.49» թիվը փոխարինել «76.21» թվով.

7) որոշման N 8 հավելվածում՝

ա. 5.4-րդ կետում «6.89» թիվը փոխարինել «7.17» թվով, իսկ «76.49» թիվը՝ «76.21» թվով,

բ. 5-րդ կետում «9.14» թիվը փոխարինել «9.42» թվով, իսկ «76.49» թիվը՝ «76.21» թվով.

գ. «ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)» պարբերությունում «1515.61» թիվը փոխարինել «1515.89» թվով, իսկ «739.35» թիվը՝ «739.07» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ